

կրօն- ժողովը ներկայումս եպիսկոպոսին մեղան ընդունեց քանի մը ամիս առաջ, բայց Թուրքիոյ ընդհանուր դարձաւ իր ընթացքին և Պատրիարքարանը ստիպուեցաւ իր ներուժը յետս կոչել: Տեսնենք նոյն դատն փորձը նորէն պիտի կրկնուի:

ՍԱՍՔ

Պոստովն, 15 մայիս

Տարիի մը կը մտնենայ երեք վարդապետներու և երկու քահանաներու Ամերիկա հասնելը:

Աստուծոյ հասան չի հասան հոս պատրիարքարան մը հաստատուելու խնդրուող ձեռք բռնին, որը նախապատրաստուած էր վարդապետացու աշխարհական մը: Հոգաբարձուներ ընտրեցին առանց դաւանանքի խտրութեան. շատ չը տեսնեց զՂՅԱԳԻՆ, ու հոգաբարձութիւնը լուծեցին. նոր մը ընտրեցին, այս անգամ հոս Լուսաւորչական, և խնդիրը հոս մնաց:

Այսօր ալ այդ կրօնաւորներ նոր շարժում մը սկսած են. շարժում մը զոր իրենք իսկ չեն ուսումնասիրած: Պօլսէն Սահմանադրութիւն թերեւով հոս հաստատուել կը ջանան: Լսողին ծիծաղը չի՞ շարժիր:

Սահմանադրութիւնը Թուրքիոյ հայոց և Դրան միջև եղած յարաբերութեանց չափն ու սահմանն է կամ ուրիշ խօսքով, Թուրքիոյ միապետէն տանկահայոց արուած կրօնաքաղաքական արտօնութիւնները կը գծէ: Ըստ Սահմանադրութեան, կրօնը անբաժան կը նկատուի քաղաքականութիւնէ, բան մը որ թրքահայերուն համար ալ սխալ է և այդ սխալին պատճառով է որ յաջա Սահմանադրութեան բողոքական և կաթոլիկ հայեր Էրզրումի միջոցով ըլլալէ դադարած են և նոր միջոց կը կազմեն: Սակայն ասիկա հնուց զործուած սխալ մըն է, որ մենք ժամանակին կը թողուք բառնալ: Մեզ համար կայ հետաքրքրական և անհասկնալի խնդիր մը զոր մեր վարդապետներ կրնային լուծած ըլլալ մինչև ցորդ:

Հոս ոչ Գուռ կայ և ոչ Դրան հետ յարաբերութիւն, ոչ Սուլթան, ոչ իսկ անոր տուած արտօնութիւններուն պէտք: Ինչ կը նշանակէ որ Թուրքիոյ Սահմանադրութիւն:

Երկրի մը մէջ կապրինք ուր միայն մէկ ազգութիւն կը ճանչցուի ամերիկեան քաղաքացիութիւն: Օրէնքը անաչառ է ամենու, բնիկին և պանդխտին միանգամայն: Տեղւոյս կառավարութիւնը Ամերիկայի հայերը զատ ազգութիւն և առանձնաշնորհեալ ազգութիւն ոչ միայն չը պիտի ճանչնայ, այլ այդ քաղաքի բոլոր յղացողը յիմարանոցի արժանի պիտի դառնայ: Արդ, ինչի կը ծառայէ Սահմանադրութիւնը, կամ այս երկրի հայոց ինչ օգուտ անկէջ:

Բացառութեան երկու կերպ կայ, երկուքն ալ անզորանական. մեր վարդապետներ կամ կը ջանան Սահմանադրութեան դիմակով մեզ էջմիածնի թիւնէն հանել և Օրմանեանի թիւն շինել, և կամ հոս ալ պատրիարք և պատրիարքարան կուզեն ունենալ: Առաջինը անզորանական է և անկարելի. նոյն իսկ եթէ տեղւոյս հայերը ուզեն Պոլսոյ Պատրիարքարանի թիւն դառնալ, Սուլթանը չը պիտի կամի, վասն զի այդ պարագային մենք ալ կուենանք մեր երեսփոխանը և Պատրիարքի ընտրութեան մէջ մեր քուէն, բան մը որ հակառակ է Բատիլիզադի կամքին: Իսկ երկրորդը (հոս Պատրիարքարան ու-

նենալը) այնքան արտաոտոց գաղափար է որ վրան խօսիլ իսկ չարժեք. միայն կուզէի գիտնալ թէ ինչ պիտի ըլլայ այդ երկուքեալ Պատրիարքարանին գործը:

Գիտաւորութիւն մըն ալ ունին եզեր մեր կզերականները: Կըսուի թէ Սահմանադրութեամբ կուզեն ձեռքի տակ առնել կրօնականէ զատ Ամերիկայի հայոց քաղաքական ձգտումներն ալ: մէկ խօսքով կրօնաքաղաքական միապետ դառնալ, կառավարել նոյն իսկ յեղափոխականները: Մեր կարծիքով, դար մը ոչ ծնած են:

Ան այսպէս, մեր կզերը թողած ազգին կենսական խնդիրը— ազատութեան Սր. գործը— մեզ Սահմանադրութեամբ կօրօրէ. կամ մենք կը քննանք կամ իրենք:

Սպասենք:

ԼԷՕ

ՕՐԸ ՕՐԻՆ

ՀԱՄԱՐԱՅԻՄ ԿՏԱԿԸ

—)(—

Գարակէօզեան համբուատոր կտակը հետզհետէ ազգին համար աննպաստ երեւոյթ մը կը ցուցնայ: Տիրքան Գարակէօզեանի ամբողջ հարստութեան 300,000 ոսկին երրորդ մասը, այն է՝ 100,000 ոսկի, փոխանակ իսկոյն ազգին յանձնելու ինչպէս բացորոշ կերպով կը տրամադրէ ինքնագիր կտակը, արբակոններու արբակոն Գրիգոր աղան հազար լը հաճի 20,000 ոսկի «նուէր» մը ընել: Այս գումարով Եջալի-Գուլէի դուրը ազգին: ցոյց տուած մէկ գետնին վրայ 5,000 ոսկի արժուութիւնով որբանոց մը պիտի շինուի, իսկ մնացեալ 15,000 ոսկիով ալ նոյն հաստատութեան համար կալուածներ պիտի գընուին, ու ամբողջութիւնը պիտի մատակարարուի միշտ Գարակէօզեանի մը հսկողութեան ներքեւ:

Կտակի մը նուիրականութիւնը ոտնակոխ ընելով այստեսակ գձուծ անիրաւութիւն մը գործել՝ Գարակէօզեաններու համար նորութիւն չէ. և ցաւալի է որ ազգի իշխանութիւնները փոխանակ երեսնուն նետելու, մերժելու այդ «նուէրը» որ ազգին համար նշանակութիւն չունի մանաւանդ երբ այդ նուաստացուցիչ ձեւերուն մէջ տրուի, իրաւաստութեան սկզբունքը ընդունած և զրէթէ հաւանած են 20,000 ոսկիով գոհանալու:

Աւելորդ է ըսել թէ ասիկա բացարձակ միջոցառութիւն մըն է այն զերդատանին հետ որուն անզորագրելի կսակները ալ ծիծաղելի առածի կարգ անցած են պարզապէս:

—Եթէ քսան հազարը չէք ընդունիր, փարայ մը չեմ տար, կըսէ աւաղակ Գրիգոր, դատի գիմեցէք, եթէ հարկ ըլլայ սոս փկաներով պիտի ապացուցանեմ կտակին անվաւերականութիւնը:

Եւ Պատրիարքարանին նուազ անդամները, բայց ի Սէթեան է-Ֆէնալէ և Արթին փաշաէ— որոնք սաստիկ բողոքած են այս յայտնի անիրաւութեան դէմ:— գողողալով այս սպառնալիքին առջեւ տեղի տալու կը միտին, չմտածելով որ եթէ ազգը կը զըրկուի գումարէ մը, Գարակէօզեան ընտանիքն ալ մեծ կողոպտիչ մը ըլլալը պատմութեան մէջ կը նուիրագործուի:

Այս առթիւ տեղին է յիշել Պոլսոյ մամուլին բռնած անլուր ընթացքը, բայց «Բիւզանդիոն»-է ան լրագիրները որոնք ամէն օր սինակին լրով կը ծանուցանեն աննշան գողութիւններ ու քսակահատի շահատակութիւններ, չեն համարձակիր ոչ իսկ բառ մը արտասանել մեր ազգային այս մեծազոյն ու բացարձակ աւաղակութեան վրայ: Ամօ՛թ իրենց:

ՏՆՏԵՍԱԿԱՆ

ՔՐԻՍՏՈՍԻ ՕՐԷՆԵՐԸ

—)(—

Ընկերային ու անտեսական այնպիսի խնդիրներ կան, որոնք սերտ կերպով կապուած են կրօնի նա մանաւանդ քրիստոնէութեան հետ: Մեր կրօնքի հիմնաքարն եղող Աւետարանի միտնայ երկու տողը բաւական էր մարդկութիւնը հոգեւորապէս փրկելէ ևս, մարտաւարապէս ալ ազատել, և անօթութիւնը, թըշուառութիւնը հետաքննել երկրի երեսնէն, եթէ ակայն մարդիկ զիտնային քրիստոսի ճշմարիտ հետեւողներ ըլլալ:

«Ձամենայն զոր ինչ կամիք թէ արացնեն ձեզ մարդիկ արարէք և զուք նոցա այնպէս»: ահա արիկ այն զերագոյն պատուէրը՝ ընկերական— անտեսական այն հրաշալի օրէնքը, որ մարդկային կեանքի անզորութեան իսկական միջոցները կը ներկայացնէ մեզ: Եւ հաստացէք որ մարդը անօթութիւնէ փրկելու համար եթէ տասնութններորդ դարու բոլոր հանճարեղ անտեսականները ժողով գումարէին՝ չպիտի կրնային անկէ աւելի նպատակալարմար օրէնք մը գծել: Ու եթէ օր մը բոլոր ժողովուրդները ճշմարիտ և անկեղծ քրիստոնեաներ դառնային՝ մեր հոգալիցին վրայէն թշուառութիւն ու կարօտութիւն սրարչաւ պիտի մեկնէին և անոնց պիտի յաջորդէին անզորութիւն ու բարօրութիւն:

Չօրաւորի և տկարի, տիրոջ և ծառայի միջև կենսալիք քրիստոնէական յարաբերութիւնն է որ պիտի սայ մարդկային կեանքին անսայթաք ուղղութիւն մը դէպի բարեկեցութիւն, հաւատարմութիւն, եղբայրութիւն: Եւ ճիշդ այդ յարաբերական սահմանն է որ գծած է աշխարհի ամենէն մեծ մարդասէրն իր ընկերային օրէնքով. «Ինչպէս կուզես որ ուրիշ մը քեզ հետ վարուի, ճիշդ այնպէս վարուէ՛ դուն ալ ուրիշին հետ»: Եւ ասկէց աւելի ազգու, ասկէց աւելի զործնական խրատ կարելի էր ուղղել մարդկութեան, մանաւանդ այն դասակարգին որուն

վորը կուշ և կոնակը սալ է: Եթէ դրամատէրն ու գործաւորը, հարուստն ու աղքատը գիտնային իսկապէս հետեւիլ քրիստոսի օրէնքին, չուտով պիտի անհրեւութեամբ այդ երկու ծայրահեղութեանց մէջտեղ կեցած ահագին անջրպետը և միլիոնաւոր մարդկային արարածներ չպիտի գատապարտուէին բնութեան այդ հարազատ մօր բոլոր շնորհներն զրկուելով թշուառ ու յուսահատ անօրի սպրկել:

Աւելցնենք թէ մարդիկ իրենց ընկերական հաւատարմութիւնը թող չիտոտեն անիշխանականի ոտմբին, սչնչականի տինամիթին հզօր պայթման մէջ: Անիրաւութեան դէմ բռնութիւնը լաւ գարման չէ և հաւատարմութեան փրկարար չէնքը կարելի չէ սպանութիւններու և աւերականերու վրայ կանգնել: Ամերիկացի զիտուն մը ըսած է «Բարբարոսութիւնը չպիտի բուժէ այն սըխալները, զորս քաղաքակրթութիւնը կը գործէ»: Մարդկութիւնը ուղղակի իր նպատակին տանող՝ ամենէն իմաստուն և ամենէն անվրէպ միջոցն է մեր հոգեւոր ու մարմնաւոր մեծ օրէնսդրին մեծ օրէնքը՝ «զամենայն զոր ինչ կամիք թէ արացնեն ձեզ մարդիկ, արարէք և զուք նոցա այնպէս»:

ՏԻՊՐԱՆ ԱՃԼՄԵԱՆ

Պ. ԱՄԻՐԻԱՆԵԱՆՑ

—)(—

Վերջին անգամ մէկ քանի պնակալէզ թերթեր մէծ ազմուկով ծանուցին թէ յեղափոխականները դրամ ուղեր են Պ. Ամիրիսանեանցէն: Սպառնալիք ալ եղեր է. ան տասնամեկն յայտներ է թէ ստիպուած պիտի մեկնի, ամէն բան երեսի վրայ ձգելով հոս:

Պ. Ամիրիսանեանց այդչափ լուրար անցնելու պէտք չունէր քանի մը սինլըրներու իրեն հանդէպ բռնած անպատշաճ ընթացքէն, որ անշուշտ ոչ մէկ կերպով կարգարանայ, և անոնց պատճառով իրեն յանձնուած պաշտօնը թողուլ սպառնալ: Եւ յետոյ ինք գիտնալու էր որ հիմակ նորաձեւութեան կարգ անցած է ամէնէն ազեղ բաներն ընել յեղափոխականի դիմակին տակ: Մենք կը հաւատանք թէ իրմէ դրամ ուղողները յեղափոխական ըլլալէ շատ հեռու, խեղճ ողորմելի արարածներ են, թշուառութեան տանջուած և ընկերային ամէն պատշաճութիւն մոռցած:

Յեղափոխականութիւնը նոխաղ քառութեան մը եղած է հիմակ: ամենէն գէշ, ամենէն եպերելի բաները կուզեն անոր երեւոյթովը ներկայացնել վար զարնելու, անպատուելու համար զայն: Իրբև վորձառու մարդ, Պ. Ամիրիսանեանց հարկ էր որ կուհէր իրեն գիմողներուն այս հանգամանքը, ու այս գէպքը հրապարակ հանուած ատեն թոյլ աւարտ չէր որ յեղափոխական

անունը անոր խառնուրդ, անունը որուն շուրջ զիշատիչ դասաներու պէս կ'ստանան միշտ շարք մը ազգականու մարդեր, յարմար առթիւ վրան խոսակցութեամբ :

Ձէ, Պ. Ամիրխանեանց, ձեռնէ գրամ ուղղները չենք հաստատար յեղափոխական եղած ըլլան. կամ խաբած են ձեզ կամ մասնաւոր գիտում մը կայ այս գործին մէջ :

Եթէ այսքան աղմուկ հանելէ ետքը չհաճիր օտարականութեան դիմելով խնդիրը մերկապարտնոց երեւան հանել եւ ցոյց տալ թէ ո՞րոնք են ձեզմէ գրամ սահանջողները, իրաւունք պիտի տար մեզ ենթադրելու թէ ա՛լ բարեգործութիւն ընելէ ձանձրացած՝ վառանք մեկնելու պատուակ մը ստեղծած էք ձեզ համար :

ՀԱՅՐԵՆԻՒԹԻ ՅԻՇԱՏԱԿՆԵՐ

—)(—

Խաչատուր կաթողիկոս անմիջապէս կը հաւաքէ ինքզինքը, ծանրախոհութեան ու հեռաւոր մտածմանց մէջ ընկղմած կուգէ ցուցնել զինքը : «Բարի եկաքի» յախտեանական բառաձեւէն եւ սուրճի ճերմակ գաւաթները պուտրի պուտրի պարպակէ կաք. կը յայտնենք իրեն մեր այցելութեան նպատակը, զոր արդէն իրեն յանձնած պաշտօնական թուղթերէս ընդ ազօտ հազիւ նշմարած է. խնդիրն առանց բաց մը լսել մտածելու, համակերպել կը ցուցնէ : Օրը շարաթ է, ինքը կաթողիկոսը՝ ներսի տուներ (կղզի) պիտի անցնի. փախկն կը յայտնենք ընկերանալ իրեն. այդ ժամուն վառէն կը վերադառնան Մուկայ Մելիք Նեթոն ու իր խորհրդական Ֆեյսիլուս (իշխան) Աւագը, իրենց հետ բերելով ի մէջ այլոց վառնի ընտիր արագէն (օզի) կարմիր փնթ մը լեցուն, ըստ ամենայնի յարմար կաթողիկոսի ճաշակին, որովհետեւ Աղթամարի տան այս վերջին ժառանգը՝ օզին ու զինին լաւ կը գնահատէր : Մելիք Նեթոն ու իր խորհրդականը, Մուկայ պատմական աշխարհի հայ արիւթներէն էին, իրենց անսակահա կազմուածք, հայկական թխաղէմ ու թաւ մազերով զինազօծութիւնը, թիկնաւէտ ու ջղուտ մարմինը, հազուած սեղանական փայլուն սարազներովը, իրենց սկսիլի տասներկու գոյն շարժարները, զլուխին զրած մետաքսէ գոյնզգոյն փօշիկները ու թամազիներով խառնուրդ կապուած ճամատան քօղզը, լեռնցի հայու խորխար երևոյթը կուտային իրենց : Այս մարդը՝ իր երկրին օգտակար ըլլալու բնական հակում ունենալով, իր սահմանին մէջ բաւական աշխատած էր, ու ժողովրդեան զարգացման գործին աշխատողներին մօտիկցող սիրտ մը ունէր թրքական խաւարներ ու հայտնական կառավարութիւնը այս ամենը ուշադրութենէ չը փախցնելով, օր մը երբ Մելիք Նեթոն անունին իր պաւտի մէջ գլուխը վերջ կերթայ եղեր, տեղւոյն իման Աղթալ քերտ թիկի ձեռքով սպանել կուտայ զայն, մեր անանկէն մէկ տարի ետք իսկ այս վերջին կոտորածները օրերուն, այդ ապիրտ

քերտ թիկն ու իր վառանքը, չարիք չը մնար որ չեն գործեր Մուկայ ու Ռչաուրեանց աշխարհին մէջ, հարկաւոր հայեր կը սպանեն շատ մը բնատանիքներ կայրիտցիներ ու բազում կայսեր կը յափշտակեն : Այսօր ալ այդ զազանները իրեն աւելի թիւրք կառավարութեան նպատակաւոր չը նորհներով ազատ, խաղաղ ու անվտանգ կապրեն, նախապէս հայերէն յափշտակած հարստութիւններն բացարձակ վախկնով :

Երբ մենք Մելիք Նեթոնի ու իր խորհրդական իշխանի հետ Մուկայ աշխարհի եւն. աղերսի մասին շահական խօսակցութեան մը մէջ ինկած մեր հետաքրքրութեան սնունդ կը ժողովինք, կաթողիկոսի խորհրդական, մեծ մանուկը ներս գալով կը յայտնէ որ կղզին ուղեւորող նաւակը պատրաստ է :

Խաչատուր կաթողիկոս՝ ոտքի ելելով իր փափուկ մարմնի վրայէն սեւ վերարկուն կը հագնի, կաթողիկոսական վեղարը կը դնէ ու կ'սկսէ շորս մեկանց գորս ելլել. Ախալանքէն երկու քարէնկեց զկտի վեր, Մանաճրի բերդի կողմը, աւազները իրայ ստանալով, կ'ըզին բանող նաւակի կապուած սեղը կը հասնենք : Տղաքներ երկար ախալան մը կը զետեղեն աւազին ու նաւակին մէջտեղ, կաթողիկոսի ետեւէն մենք ալ գանդաղ քայլերով, լարախաղաղ մը ճարտիկութեամբ կը մտնենք նաւակը, զոր իրենք նաւակը կ'սկսեն : Այս նաւակը միջակ մտմուկի (մալխայի) մեծութեամբ տեղական վարդապետութեան արտադրութիւնն է. պարզ ու անուշք : Կաթողիկոսին հետ նաւակի ալ կողմը գամուած ախալանի վրայ կը նստինք. մեր զիմացն ունենալով Մելիք Նեթոն ու իր խորհրդական իշխանը, օղի վարջը՝ մեծ գաւաթով մը մէջտեղ դրուած : Նաւակը ազաք կը քակեն նաւակը ցամաքին կապող պարանը ու մայրի իրիկուան զով հովին զիմաց կը բանան նաւին առաջատար, լուս ու մուշկ ծովին համեստ ալիքներէ հետ խաղաղ ու ծրփալով կ'սկսի սահել զէպի Աղթամարայ պատմական կղզին : Մելիք Նեթոն կը լեցնէ օղիի գաւաթը, խոնարհութեամբ կաթողիկոսին ներկայացնելով կաթողիկոսը մեծ հաճոյքով կը պարպէ զայն ու իր մասնագիտութեամբ մեծ գովաւ կը շքուայլէ այդ «քաղցրակողմին արագին» : Օղի խմելու կարգն սկսած է, ամէն մէկս մեր չափով կը խմենք, երբեմն կը զիտենք ու երբեմն կը խօսինք : Գրեթէ մէկ ժամ կը տեւէ մեր այդ ծովային ճամբորդութիւն, մէկ ալ Աղթամարայ կղզիի ապառաժները կը տեսնենք առաջատար վար աննելով, յամբընթաց նաւը ապառաժներին կը մօտիկցնեն՝ ուր քարերի վրայ կարգաւ կեցած են վանքի մէկ քանի վարդապետներն, երկու սարկաւազ, վարժապետն ու 7-8 հաս պատուած զղեսներով զլեզաղի ուսանող աղաճներ. վանական այս թափօրը կազմուած է Աղթամարի վեհախորհրդէն ընդունելու, ուստի՝ երբ կաթողիկոսին հետ ցամաք կը կ'սկսենք, վարժապետին առաջնորդութեամբ ազաք աններդաշնակ երգ մը կը սկսին, մեր առջեւէն առաջնորդելով զկտի կղզիի վեհախորհրդէն : Երբ վեհախորհրդէն ներս կը մտնենք արդէն մեծ գետին սրահ կը ու ճրագները վառուած էին : Ինչ մը հանդիստ ու խորթիկ ճոշ մը բնիկ ետք, կերթանք վանքի ուսուցիչ Պ. Երեցեանի անհեղիւ մանուկը եւ

օրուան այլապէս ապաւորութեան մերթ գուարթ ու մերթ խոտոված երազներով ներհնու :

ՊԵՏ

[Շարունակելիք]

Ձ Ե Կ Ո Յ Ց

Մեր յատարիկայ երկու թիւերուն բանասիրական բաժնից պիտի յատկացնենք Պ. Սապահ-Գրեւանի վերջին գասախօսութեանց ամփոփումն, եւ յետոյ պիտի վերսկսինք հրատարակել վարդ-Պատրիկովի յաշտակարանը, զոր ընդմիջած էինք Տօքթ. Բարսեղի շահեկան ուսումնասիրութեան պատճառով :

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

—)(—

Փ. Պօլիս, 15 Մայիս

Օղոստ. 14ի ցոյցէն յետոյ գաղթականներու հոճ լազմութիւն մը քաղաքս ողողեց : Տեղիս թաղական խորհուրդը կազմեց եօթը անձերէ բաղկացած Ա. մասնախումբը, որուն մէջ միւսմայն հասնութեամբ ծախքերու հոգը ինծի յանձնուեցաւ : Այս Ա. մասնախումբ մինչեւ դեկտ. 15 զուտ տեղական նպաստներով կարողացաւ պատասպարել, կերակրել եւ հոգ տանիլ բոլոր կարօտ գաղթականներուն : Այս միջոցիս հասան անգլիական օգնող մասնախումբին պատուիրակները : Ա. մասնախումբը ասոնց գալուստէն շունչ առած տուաւ իր հրամարականը : Բ. մասնախումբը կազմուեցաւ Տ. Թամիրեանցի առեւնապետութեամբ, որ զործակցեցաւ պատուիրակներուն եւ երկուրի մը կազմակերպեց որմէ հարկը նախադէպէն աւելի շահ զոյսցաւ : Այս մասնախումբին ալ հրամարեցաւ : Երեկոյթին հասոյթը կարօտ գաղթականներու բաժնելու համար կազմուեցաւ Պ. մասնախումբը Տ. Երեւանցի առեւնապետութեամբ, որ մէկ քանի ամիսներէ յետոյ հրամարեցաւ : Արդ, երբ մեր հրամարականը ստիւնք, պատրաստեցի հաշիւներս եւ յանձնեցի Տ. Թամիրեանցի : Որպէս զի քննուին եւ վաւերացուին : Ամիսներ թախանձելէ յետոյ գրաւորապէս զինքիցի Պ. մասնախումբին եւ վաւերացուին : Բայց աւելի բախտաւոր չկրցայ ըլլալ : Փլօզտիկ աղապի շրջանակներու հին սովորութիւնն է. աղղին դարձը ա՛ռ, ծախսէ, կե՛ր, վառնէ՛, հաշիւ հարցնող փնտոց չը կայ : Թաղական Խորհուրդ, Հոգաբարձու, ընկերութիւններու մէջնքն ալ այս ճամբէն ընթացած են : Աւստի կը զմե՛ս մասնախումբին եւ կը խնդրեմ որ ներփախուած հաշուեկշիւը հրատարակէք ձեր էջերուն մէջ : Մասնախումբի միւսները չա՛հած եմ խմբով եւ պատրաստ եմ աղապի

մարմնի մը առջեւ հաշիւ տալու : Թերեւս ասիկայ առիթ մը ըլլայ իմ միւս ընկերներուս եւ միւս մասնախումբերուն իրենց հաշիւները մամուլի միջոցով տալու աղղին, վասն զի կը լսեմ թէ ամէնքն ալ պատրաստած են իրենց հաշիւները օրինաբարապէս եւ պատրաստ են ներկայացնելու : Բայց համա առու մարմինը գոյութիւն չունի :

Մնամ միշտ յարգանքք Յ. Գ. ԵՐԿԱՆԵԱՆ

Բնիկ. հաշուեկշիւ մասնախումբիս Գ. Պօլիս գաղթ. Ա. մասնախումբիս 1896 Սեպտ. 1էն Դեկտ. 15 1896

Table with 2 columns: Item description and Amount in rubles (ր. սն.). Includes items like 'ՊՈՒՏԲ' and 'Փոստ'.

Table with 2 columns: Item description and Amount in rubles (ր. սն.). Includes items like 'ԵՆՔ' and 'Ճամբորդութեանց համար'.

ԴԵՍ ՈՒ ԴԵՆ

—)(—

Թաւրէժէն կը գրեն «նոր Դարի» թէ՛ Խոյի բնակիչներէն մօտ 100 տուն հայ ժողովուրդ մահմետականութիւնը ընդունել է : Ասոնք կը ըստիտիս եղեր են, կըսուի, իսկով հոգեւոր պետ Շէյխուլի պահանջումովը, որ կանչելով այս հարիւր հայ ընտանիքները, ստիպել է որ իսլամանան, հակառակ պարագային պիտի գլխատէ զիրենք :

Պոլոյոստիկանութիւնը վերջին կասկածներուն վրայ, գարձեալ սկսած է դաւաճանքները իրենց ծննդավայրերը զրկել բռնի կերպով : Դոյն ստիկանու-

Թիւնը Պատրիարքարանի իմաց տուեր է թէ Պաշտօնախոյսէ դարձող հայերը եթէ անցադիր չունենան ասկէջ ետքը պիտի մերժուին : Ատոր վրայ, պատրիարքարանը գրած է Պաշտօնախոյսը չունեցողներու թիւը : Խորհրդանշաններու սրբազան զի գաղթականները անցադիր անուն եւ աղքատներուն ալ անցադիրը ձրի հայթայթելու համար տեղական իշխանութեանց հետ բանակցին ըստ օրինի :

— Պատրիարքարանի բազմաթիւ յանձնաժողովներու վրայ այժմ կու գայ հատ մըն ուլ աւելնալ : Աւագերէցներու յանձնաժողովն է այս, ու թ քահանաներէ բազկացած որ պաշտօն ունի Հայաստանի կողոպտուած եկեղեցիներու անթիւները և գոյրերը տեղը բերելու միջոցներուն վրայ խորհել :

— Ֆիւրաէթիաի գեղադործական վարժարանի 24 ընթացաւարներէն Պ. Մուշեղ Մուրատեան, որ տեղոյն հայկական գեղարանը հաստատուցներէն մէկն է, անցեալները քննութիւն անցընելով գեղադործ ընդունուեր է ամերիկեան զբահաւորի մը մէջ ծառայելու համար մէկ տարի : Պ. Մուրատեան արդէն իր պաշտօնին գլուխն անցած է :

— Տօքթ. Յովհաննէս Արշակունի, որ Նիւ-Եորքի մէջ բժշկութիւն կընէ և որ ժամանակէ մը ի վեր ազգ. գործերէ քաջաւած էր, տեղոյն Որբախնամ տիկնանց և լսարանի վարչութեան կողմէ ի նպաստ որբերու սըրուած հանդէսին մէջ բանախօսելով ըսեր է թէ հայ երիտասարդութիւնն ամէն տեղ պարտի ամուսնանալ կոտորածին վնասները դարձանելու համար :

— Օսմ. կառավարութիւնը որոշեր է եղբր այսուհետեւ անցագիր չտալ ամերիկացի քաղաքացիներու և անգլիական հպատակներու : Թուրքիոյ ներսերը ճամբորդելու համար : Պօլսոյ ամերիկեան գեսպան Պ. Անճէլ բողոքեր է այս որոշման դէմ :

— Լաւնաքան կը գրեն «Մշակի» թէ վտահելի նամակ մը ստացես կը նկարագրէ Կիլիկիոյ վիճակը. «Սուէրիակ մօտ օրերս բազմաթիւ պաշը սղողները և բէտիֆներ կանչուեցան Իսկէնտերուն. միևնոյն ատեն Պօլսէն հօն բերուած են 10 հատ լեռնային մեծ թնդանթներ : Ժողովուրդը թէև այլևայլ բացատրութիւններ կու տար այդ շարժման, սակայն լուռ շուկ մը, փոփոսք մը երեան կը հանէ կառավարական դաւադրութիւն մը, որ յատկապէս լարուած է Ձէյթունի դէմ : Օրէ օր կը հաստատուի այն կարծիքը թէ նպատակ կայ երկրին անառիկ գիրքերը գրաւելէ ետք՝ պատրուակով մը յանկարծակի բերել այդ

քաջ լեռնային ու այսպէս ի անտոյզ վիճակ պաշարած է զմեզ : Արդեօք այժմ ալ կառավարութիւնները հանդիսատէսի լոկ (սչումն) պիտի գիտեն հեռուէն կամ մօտէն, թէ . . . »

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՂԵՊՔԵՐ

Պ Ա Տ Ե Ր Ա Չ Մ Ը

Սպանիացոց գործը դէշ է : Յուսահատութեան մը մունջները կը շատան : Մանիլայի աղէտին հետեւանքները կը շեշտուին շատ սուր կերպով : Ֆիլիպպիններն ապստամբութեան հնոց մը գարձած են : Բնիկները, Ակոմիալտօ ապստամբութեան առաջնորդութեամբ սպանիացիներուն վրայ կը քալեն՝ ճամբան ամէն բան շախախտելով : Ընդհ. կառավարիչը 5,000 անգլ. ոսկի խոտացիր է այս զարհո ընկի մարդուն գլուխը բերողին, ինչ որ տելի տաքցուցած է հնգիկներուն դըլուխը : Կառավարիչը այս ծանր կացութիւնն հեռագրեր է Մատրիտ, ուր շատ սաժանելի սպաւորութիւն առաջ բերեր է :

Մատրիտի կառավարութիւնը յոյսը բնիկներուն վրայ գրած էր, որոնք հիմա Մանիլայի դըններն հասած են. սպանիացի զինուորները թշնամիին կողմը կանցնին խումբ խումբ. մնացածները արամադրութիւն ունին անձնատուր ըլլալ ամերիկացիներուն : Լիւսօն կղզին ալ լորսուած է :

Սպանիական մամուլը խոտիկը քննադատէ կառավարութեան բունած է ընթացքը՝ պատերազմի սկիզբէն ի վեր՝ հանդէպ ֆիլիպպիններու : Ժողովուրդը մամուլի այս բողոքներուն կը միացնէ իր ձայնը : Նախարարակետ Պ. Սակասդա կը ջանայ ժամ առաջ փակել Երեսփ. ժողովի նըստաշրջանը, որպէս զի կառավարութիւնը գործելու կատարելալ աշատութիւն ունենայ :

Երեսփ. ժողովին մէջ մէկ քանի զօրավարներ կարծիք յայտնեցին թէ ամէնէն աննպատ պայմաններուն մէջ իսկ Սպանիական ռոզ է երկու տարի գիմանալ. հետեւապէս անօդուտ է խաղաղութեան խօսք ընել երկրին համար բողոքովին անպատուաբեր կերպով : Անգլիական լրագիրները կըսեն թէ Մաք Բիլլի խաղաղութեան պիտի յօժարի պայմանով որ ֆիլիպպինները Սպանիոյ մնան, Քուպան բողոքովին անկախ ըլլայ և Բորթօ-Ռիքօն փոխան պատերազմական սուղանքի Մ. Նահանգաց սեպհականութիւնը դառնայ : Եւ ճիշդ այս պայմանն է որ չեն ընդունիր սպանիացիք :

Քուպան աւելի միութարական երեւոյթ մը չընծայեր : Սամբուն

կուրասէ Սանթիակոի նեղուցին բերանը : Մարտի 29-ին Մանիլայի (Սանթիակոի մօտ) արտաքին ծովախորշը գրաւեցին սպանիական թնդանթակիր մը և մղելով այս յաճախող հիմա ծովախորշին ներքին կողմն ալ գրաւած է : Ֆլորիտաի մէջ տանկերից նստէ ատմից մը պատրաստ կայ որ անմիջապէս սղող պիտի փոխադրէ Քուպա : Երբ ամերիկացիք 30 հաշար զօրք ունենան Քուպաի մէջ, չճշտական պատերազմ մը պիտի մղեն :

Պլանքօ զօրավարը յետին փորձ մը ընելով նամակ գրեր է սպաւորտամբարակա Մաքսիմօ Կամֆրի, հրաւէր կարգալով անոր միանալ իրենց զօրս վանելու համար հասարակաց թշնամին, ամերիկացիին, և պատերազմէն ետք Կատարեալ անկախութիւն խոտուեալով : Մեծանուն ապստամբացեալը սպաւորէն պատասխանեց է այս կեղծուպատիր հրաւէրին, յայտնելով թէ ինք ցեղակցական կողերու կարեւորութիւն չիտար, կատէ սպանիական բռնակառութիւնը, և կուրահանայ ամերիկեան վեհանախարարութեան ու մարդասիրութեան վրայ :

Մայիս 30-ին ութը զրա՛տու որ ումրակոծեր են Սանթիակոն երեք ժամ : Թշնամին ետ մղուեր է և չէ յաջողեր ցամաք զօրք հանել :

Թ Ո Ւ Ր Ք Ի Ա
Թեաւ իման պարպելու գործը բողոքովին վերջացած ըլլալով, Կրէտէի ինքնավարութեան կազմակերպութեան բանակցութիւնները փութով պիտի ձեռք առնուին : Կը կարծուի թէ շուտով պիտի հաստատուի առժամեայ վարչութիւն մը, որուն տարերքը բնիկ ժողովուրդէն պիտի փոխ առնուին :

— Գուրը շրջաբերական մը շրջեր է Պօլսոյ դե. պաններուն խնդրելով որ Կրէտէի միջազգային զօրքերուն տեղ նորեր բերուին, վասն զի անոնց պայմանաժամ մը լրացած է :

— Երկու զի պալատին մէջ առթի մը կը ուղատուի Լոնտոն շրջելու համար պատուիրակութիւն մը որ պաշտօն ունենայ Անգլիոյ հետ բարեկամական կապերն ամրապնդել, որոնք վերջերս թեթևապէս թուլցած էին :

— Ենթինի պաշտօնական օրաթերթը շատ մութ գոյններով կը նկարագրէ սովին առաջ բերած վիճակը այդ նահանգին մէջ :

— Էտհէմ փաշայի Պօլսո մուտքը շատ անշուք ու անշուկ եղեր է, մասնաւոր հրամանի մը համեմատ անշուշտ : Միևնակ ուրբաթի Սէլամըքին ու անոր յաջորդող ընդունելութեան ինք ու իր զօրավարները ներկայ գտնուեր են :

ՍԱՓՐԻՉ

—) (—
Պատու ունի մ ծանուցանել արգոյ հասարակութեան թէ ժամանակէ մը ի վեր աշխատելով Օթէլ Բոմբիւրայի կից սփրիչ Անկէլ Եուվանօֆի քով եւ տեղոյս սղողար և հայ պատուարժան յաճախորդացս վստահութիւնն առ իս գրաւած լինելով, այս անգամ մասնաւոր խանութ մը բացած եմ Ուլլիցա Բըլուլուլուքս, օթէլ խմբիւրջով կից :

Լիւրիս և մ թէ պատուարժան հաւատարակութիւնը չպիտի զլանայ շարունակել ինձ իր քաջալերը, այցելելով այսուհետեւ իմ նոր խանութը ուր պիտի գտնէ կանոնաւոր գրք եւ անհամեմատ մաքրութիւն :

Միևնակ Սեղապեան
Եւ իմ ընկերս
Սեթօե Երազիկեան

ՃԱՇՏՐԱՆ ԵՒ ԶԲՈՍԱՐԱՆ

—) (—
ՀԱՃՏՐԱՆ ԱՎՕՐԻՆ ԺԻՇԵՐ ԴԵՄԸ
Կը բանկցուեն Պ. Տիգրան Թիւֆեակիւնեան և ընկ'ր

Արեւտին մէջ կատարելութեան հասած երկտասարդ հայու մը ձեռամբ ստորուած այս հովատուն, մաքուր ու զեղչական հաստատութիւն ոչ միայն պատիւ կը բերէ հայ ճաշակին, այլ և մեծ խթան մը կը ըլլայ որ հայ ու օտար փախկակներն իրենց դարձանալին և ամանային ժամադրաւայր մը ընեն զայն գրասենյու և ճաշիւր : Պոստսեան ախորժարեր հովորուն ու Սեւ ծովի կայոյս սարածութեան առջեւ :

Հակասակ այս հրապարակ ստաւելութիւններուն, յաճախորդները պիտի գտնեն յոյժ գիւրամատչելի գիներ թէ ըմպելիքի թէ կերակուրներու մասին :

ՊՕՐՍԱ

Վառնա 3 Յրեկիս	
ՊՈՒՂՏԱՅ	
Վակօն, լիպրա 47—51, հէքթօլ 9.50—10 ֆրանք	
Արապա, լիպրա 47—55 հէքթօլ 8.50—10 ֆրանք	
ԱՐԲԱ	
Լիպրա 38—40 հէքթօլ 4.80—5 ֆրանք	
ՄԸՍԸՐ	
Վակօն, լիպրա 57—58 հէքթօլ 7—7.50 ֆրանք	
Արապա, լիպրա 57—60 հէքթօլ 7.80—8 ֆրանք	
ՅԱՍՈՒԼԵՍ	
100 օգգասը 15—20 ֆրանք՝ մալա կէօրէ	
Առապա մուսակէսի նաբօլոն 21 ֆրանք հիսապը լիէ տիր :	
Կիւնտէ 1—2 վակօն վէ 15—20 արապա պուզտայ, 3—4 արապա արբա, կէլմէքաէ տիր :	

ՏՊԱՐԱՆ «ՇԱՐԺՈՒՄ»

—) (—
Կը տպագրուին ամէն լեզուէ այցետոմս, հասցետոմս, նամաւ կաղալու, հարսանեկան հրատարակիչ, մահազդ, լինչպէս նաև պրօշիւռներ :

Գիւնեւն յոյժ գիւրամատչելի : Ուրիշ քաղաքներէ եկած յանձնարարութիւններ ճշգրութեամբ և փութով կը կատարուին :

«Շ Ա Ր Ժ Ո Ւ Մ»

Վառնաի մէջ կը վաճառուի Մուսալլա, Թահմիզ Կիլիկիոյ քանի խանութը, Սասուն սրճարանի ծխափառտին քով և Ապտիլբարհան մզկիթին դէմը հայկական գրատունը, Ա. Զարբանէլեանի քով :